Հաստատված՝
Բանկի վարչության
23/02/2026թ.
թիվ 07 արձանագրությամբ
Ուժի մեջ է 24/02/2026թ.-ից

Որոշում եմ ընդունել իմ անձնական տվյալների տրամադրման վերաբերյալ և համաձայնություն եմ տալիս դրանց մշակման վերաբերյալ ազատ, իմ կամքով և իմ շահերից ելնելով:

Սույն համաձայնությունը ստորագրելով անվերապահորեն ընդունում եմ, որ Բանկի կողմից ժամանակ առ ժամանակ կարող են փոփոխություններ կատարվեն սույն համաձայնությունից բխող ծանուցումներում և գործընթացներում, միաժամանակ տեղեկացված եմ, որ նման փոփոխությունների մասին կարող եմ տեղեկանալ Բանկի պաշտոնական կայք էջի https://www.evoca.am/hy/ բաժնում:

Անձնական տվյալների սուբյեկտի համաձայնությունը ստացած օպերատորի անվանումը և հասցեն՝

- «ԷՎՈԿԱԲԱՆԿ» Բաց բաժնետիրական ընկերություն, ՀՀ, ք.Երևան, Հանրապետության 44/2:

1. **Անձնական տվյալների մշակման իրավական հիմքերը՝**
   - ՀՀ օրենսդրություն, այդ թվում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, Բանկի և ինձ հետ կնքվող/ված պայմանագրերը, «Համալիր բանկային ծառայությունների մատուցման» հրապարակային օֆերտան, ինչպես նաև սույն համաձայնությունը:

2. **Տվյալների հավաքագրում**
   Բանկը կարող է հավաքագրել Ձեր անձնական տվյալները հետևյալ եղանակներով.
   - Ձեր անձնական այցի ժամանակ Բանկի սպասարկման գրասենյակներ (գլխամասային գրասենյակ, մասնաճյուղեր)
   - Բանկի ինտերնետային կայքի միջոցով, համաձայն Գաղտնիության քաղաքականության
   - Հեռակառավարման համակարգերի (օրինակ՝ Evoca Touch, Evoca Online և այլն) միջոցով
   - Բանկի նորություններին բաժանորդագրվելու դեպքում
   - Բանկի ինտերնետային կայքի օնլայն խորհրդատուի միջոցով (տրամադրելով անուն, ազգանուն, հեռախոսահամար, էլեկտրոնային հասցե և այլն)
   - Երրորդ անձանց միջոցով (օրինակ, օրինական ներկայացուցիչ, լիազորված անձ)
   - Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից, ինչպես նաև օրենքով սահմանված այլ կազմակերպություններից («ԷԿԵՆԳ» ՓԲԸ, «ՆՈՐՔ» հիմնադրամ, համաձայն PRD24-0001-11_2 հավելվածի), նախապես ձեռք բերելով Ձեր համաձայնությունը
   - e-Register
   - ՖԳԻԱՍ, POS, այլ տեխնոլոգիական հարթակներ
   - Հանրամատչելի (բաց) աղբյուրներից

3. **Անձնական տվյալները մշակվելու են հետևյալ նպատակով՝**
   - Սպասարկման որակի բարձրացման և ապահովման նպատակով
   - Ձեզ համապատասխանող բանկային ծառայություններ մատուցելու, Ձեր պահանջմունքները և հետաքրքրությունները հասկանալու համար
   - Ձեզ ծանուցումներ, քաղվածքներ և մարքեթինգային առաջարկներ ուղարկելու համար (պահանջում է Ձեր համաձայնությունը, եթե օրենսդրությամբ սահմանված է)
   - ՀՀ օրենսդրության պահանջների համապատասխան գործարքներ կնքելու կամ գործարար հարաբերություններ հաստատելու համար
   - Ձեզ հետ կապ հաստատելու, դիմումներին, հարցերին և պահանջներին պատասխանելու համար
   - Պայմանագրային պարտավորությունները պատշաճ իրականացնելու համար
   - Ծառայությունների մատուցման պայմաններում փոփոխությունների մասին Ձեզ ծանուցելու համար
   - Հնարավոր խնդիրների և չարաշահումների հայտնաբերման ու լուծման համար
   - Օրենսդրությամբ սահմանված և/կամ պատշաճ սպասարկման հետ կապված այլ օրինական նպատակներով, ինչպես նաև հնարավոր հանցագործությունների (ահաբեկչություն, փողերի լվացում և այլ) հայտնաբերման համար

4. Անձնական տվյալների ցանկը, որոնց մշակման վերաբերյալ տրվում է անձնական տվյալների սուբյեկտի համաձայնությունը.

- Անձնական նույնականացնող տվյալներ (անուն, ազգանուն, հայրանուն, սեռ, ծննդյան ամսաթիվ, հասցե, քաղաքացիություն)
- Անձը հաստատող փաստաթղթերի տվյալներ (անձնագիր, ID քարտ, ՀԾՀ)
- Կոնտակտային տվյալներ (գրանցման և բնակության հասցե, հեռախոսահամար, էլ. փոստ)
- Ընտանեկան դրության վերաբերյալ տվյալներ (ամուսնական կարգավիճակ, տվյալներ երեխաների մասին)
- Աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալներ
- Կրթության վերաբերյալ տվյալներ
- Ֆինանսական տվյալներ (եկամուտներ, հաշիվների համարներ, վարկային պատմություն, վճարային քարտերի և իրականացված գործարքների վերաբերյալ տեղեկություններ)
- Կենսաչափական տվյալներ
- Այլ տվյալներ, որոնք անհրաժեշտ են Բանկի կողմից ծառայությունների մատուցման կամ օրենսդրական պարտավորությունների կատարման համար

5. Անձնական տվյալների հետ կատարման ենթակա գործողությունները

- Անձնական տվյալների մշակումն անձնական տվյալների հետ մեխանիկական և/կամ տեխնիկական միջոցներով որոշակի գործողությունների իրականացումն է, այդ թվում՝ անձնական տվյալների հավաքագրում, մուտքագրում, համեմատում, համակարգում, պահպանում, փոխանցում, ուղղում, ուղեփակում, թարմացում, փոփոխում, տարածում, ոչնչացում, ապանձնավորում և բլոկավորում, օգտագործում, ուսումնասիրում, սույն Համաձայնությամբ սահմանված նպատակներին հասնելու համար այլ գործողություններ:

6. Անձնական տվյալների հասանելիությունը

- Սույն տալիս եմ իմ համաձայնությունը առ այն, որ Բանկի կողմից ինձ վերաբերող անձնական տվյալները անհրաժեշտության դեպքում կարող են փոխանցվել ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ՀՀ տարածքից դուրս սույն համաձայնագրի Հավելված 1-ում նշված երրորդ անձանց, որոնք իրականացնում են անձնական տվյալների մշակում, պահպանում և տեղեկատվության տրամադրում: ՀՀ տարածքից դուրս անձնական տվյալների փոխանցումն իրականացվում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին պահպանմամբ:

7. Անձնական տվյալների պահպանման ժամկետները

- Անձնական տվյալները Բանկում կարող են պահվել 70 տարի ժամկետով:
- Անձնական տվյալների մշակման մասով Համաձայնությունը ցանկացած պահի կարող է հետ կանչվել, իսկ ստացված անձնական տվյալների մշակումը՝ դադարեցվել Տվյալների սուբյեկտի գրավոր դիմումի հիման վրա դիմումը ներկայացնելուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում, ընդ որում սույն պարբերությամբ նշվածը կարող է իրականացվել միայն այն դեպքերում, երբ Տվյալների սուբյեկտը Բանկի հանդեպ չունի չկատարված պայմանագրային պարտավորություններ, և բացակայում են գործող պայմանագրային իրավահարաբերություններ, այլապես Բանկի և Տվյալների սուբյեկտի միջև առկա պայմանագրային հարաբերությունները ենթակա են վաղաժամկետ դադարեցման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Բանկը իրականացված գործողությունների մասին կծանուցի Ձեզ, հաջորդիվ երեք աշխատանքային օրվա ընթացքում:
- Անձնական տվյալները հետ կանչելու դեպքում Բանկը չի կարողանալու Ձեզ տրամադրել քաղվածքներ հաշիվների շարժերի և կատարված գործարքների վերաբերյալ:
- Անձնական տվյալների հետ կանչելու դիմումը Բանկի կողմից կարող է մերժվել, եթե առկա է հակասություն այլ օրենսդրական պահանջների հետ: Նշված դեպքում Բանկի կողմից ուղեփակվում է անձնական տվյալների մշակումը՝ Ձեզ ներկայացնելով համապատասխան հիմնավորում:

8. Այլ կարգավորումներ

- Հաստատում եմ, որ տեղեկացված եմ, որ կարող եմ ցանկացած ժամանակ ծանոթանալ իմ անձնական տվյալներին, պահանջել դրանց ուղղում կամ ոչնչացում, եթե անձնական տվյալներն ամբողջությամբ կամ ճշգրիտ չեն կամ հնացած են կամ ձեռք են բերվել անօրինական ճանապարհով կամ անհրաժեշտ են մշակելու նպատակներին հասնելու համար:

- Հավաստում եմ, որ կարդացել եմ սույն համաձայնությունը և հավաստում եմ, որ համաձայնության տեքստը իմ համար ամբողջությամբ հասկանալի, ընդունելի և ընկալելի է:

Հավելված 1
Երրորդ անձանց տվյալները, որոնց Բանկը տրամադրում է իր Հաճախորդների անձնական տվյալների վերաբերյալ տեղեկություններ:

Երրորդ անձինք, որոնց կարող է փոխանցվել Ձեր անձնական տվյալները՝

1. «ԷԿԵՆԳ» ՓԲԸ («Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ),
2. ՀՀ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն (բնակչության պետական ռեգիստր),
3. ՀՀ Ճանապարհային ոստիկանություն,
4. Կադաստրի կոմիտե,
5. ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն,
6. ՀՀ Արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայություն,
7. ՀՀ Պետական եկամուտների կոմիտե,
8. «ՆՈՐՔ» Սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամ,
9. Բանկի հետ համագործակցող Ապահովագրական կազմակերպություններ,
10. Վարկային բյուրոներ,
11. ՀՀ ԿԲ Վարկային տեղեկատվական համակարգ (Վարկային ռեգիստր),
12. Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստր,
13. «Արմենիան քարդ» ՓԲԸ,
14. «Ազգային հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն,
15. «Բնակարան երիտասարդներին» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն,
16. Բանկին ֆինանսավորող միջազգային ֆինանսական կազմակերպություններ,
17. Թղթակից բանկեր,
18. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայություն,
19. Բանկի հետ համագործակցող վճարահաշվարկային կազմակերպություններ,
20. Բանկի ծրագրային ապահովման և սպասարկման ծառայություններ մատուցող երրորդ անձինք,
21. Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպություններ,
22. Մարքեթինգային միջոցառումների իրականացման նպատակով՝
    - «ՄՈԲԲԻՍ» ՍՊԸ
    - Mailchimp հարթակ
    - Meta գործիք
    - Google Ads գործիք,
23. «Ձեր Փոխարեն» ՍՊԸ,
24. «Փաթեթ Թիմ» ՍՊԸ: